3162 25.10.21

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
MINISTRY OF FOREIGN AFFAIRS OF THE REPUBLIC OF ARMENIA
SECRETARY-GENERAL

№ 1112/44059-21
20.10.2021

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՎԱՀԱՆ ՆԱՐԻԲԵԿՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Նարիբեկյան,

Ի պատասխան ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Աննա Մկրտչյանի կողմից՝ Ձեր գրությամբ ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավարին ներկայացված ՀՀ կառավարությանն ուղղված գրավոր հարցերի և հիմք ընդունելով ՀՀ վարչապետի հոկտեմբերի 20-ի համապատասխան հանձնարարականը ԱԺ կանոնակարգ օրենքի 119-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն պատգամավորի գրավոր հարցմանը պատասխանելու վերաբերյալ՝ հայտնում ենք հետևյալը.

2020թ. նոյեմբերի 9-ի հայտարարությունից հետո ենթադրյալ գերության մեջ գտնվող անձնանց վերաբերյալ տեղեկություններն առկա փաստերի և տեսանյութերի հիման վրա ՀՀ իրավասու գերատեսչությունների կողմից շարունակաբար ճշգրտվել և փոփոխվել են, նշված գործընթացի արդյունքում մշակված տեղեկատվությունը փոխանցվել է գործընթացում ներգրավված գործընկեր երկրներին և կազմակերպություններին:

Նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության 8-րդ կետով նախատեսված երկու կողմում պահվող գերիների առաջին փոխանակումը տեղի է ունեցել 2020թ. դեկտեմբերի 14-ին, իսկ տվյալ պահին Ադրբեջանից վերջին 5 հայ գերիները Հայաստան են վերադարձել ս.թ. հոկտեմբերի 19-ին: Հետևաբար, հարկ ենք համարում ընդգծել, որ գերիների վերադարձը շարունակական գործընթաց է:

Հայկական կողմը բազմիցս ահազանգել է իր գործընկերներին, որ Ադրբեջանը, գիտակցելով մեր հանրությունում գերիների հարցի զգայունությունը, փորձում է հավանական բանակցությունների դեպքում օգտագործել այս հանգամանքը, որպես հայկական կողմի նկատմամբ ազդեցության լծակ:

ՀՀ կառավարությունը, ի դեմս արտաքին գործերի նախարարության՝ իրավասու այլ գերատեսչությունների հետ համագործակցությամբ, հարցի առնչությամբ մշտական կապի մեջ է Կարմիր խաչի միջազգային կոմիտեի և միջազգային այլ կառույցների հետ: Վերջիններիս հետ համագործակցությամբ, ակտիվորեն աշխատանք է տարվում գերիների իրական թվերը պարզելու, պահման վայրերի և պայմանների վերաբերյալ տեղեկատվության ստանալու, ինչպես նաև՝ արդեն իսկ հաստատված գերիների հայրենադարձումը կազմակերպելու ուղղությամբ:

Կառավարական տուն 2, Վազգեն Սարգսյան 3, Երևան 0010: Հեռ. +374 60 620000, Ֆաքս +374 60 620062
Government House 2, 3 Vazgen Sargsyan str., 0010 Yerevan, Tel: +374 60 620000, Fax: +374 60 620062, E-mail: info@mfa.am

Հայկական կողմը միջազգային տարբեր կառույցներում և օտարերկրյա գործընկերների հետ հանդիպումների ընթացքում բազմիցս ընդգծել է, որ Ադրբեջանը՝ խախտելով Ժնևի կոնվենցիայի դրույթները և նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությամբ ստանձնած պարտավորությունները, շարունակում է թաքցնել գերիների իրական թիվն ու նրանց պահման վայրերը, արհեստական խոչընդոտներ է ստեղծում վերջիններիս վերադարձի հարցում՝ քաղաքականացնելով հումանիտար խնդիրները: Խնդրի շուրջ իրազեկվածության բարձրացման համատեքստում, թե՛ գերիների ու պահվող անձանց, և թե՛ մարդասիրական իրավունքի այլ խախտումների իրավական գնահատականները շարունակաբար ներկայացվում են միջազգային կազմակերպությունների ու օտարերկրյա պաշտոնատար անձանց հետ հանդիպումների ընթացքում:

ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության հատկապես կարևոր գործերի քննության վարչությունում շարունակվում է Ադրբեջանի Հանրապետության ռազմաքաղաքական ղեկավարության կողմից Արցախի Հանրապետության դեմ ագրեսիվ պատերազմ սանձազերծելու և վարելու, խաղաղության, մարդկության անվտանգության դեմ ուղղված և պատերազմական այլ հանցագործություններ կատարելու փաստերի առթիվ 2020 թվականի սեպտեմբերի 29-ին հարուցված քրեական գործի նախաքննությունը, որի շրջանակներում քննության առարկա են դարձվել Արցախի Հանրապետության խաղաղ բնակավայրերի քաղաքացիական բնակչությանը համակարգված, կանխամտածված և նպատակաուղղված գրոհների թիրախ դարձնելու, Արցախի մշակութային և հոգևոր ժառանգություն համարվող պատմական հուշարձանները, արվեստի գործերը, ծիսակատարությունների վայրերը հարձակման օբյեկտ դարձնելու և հարձակման հետևանքով դրանց մեծ վնաս պատճառելու, հակառակորդի կողմից արգելված զինատեսակներ կիրառելու, Թուրքիայի Հանրապետության զինված ուժերի, ինչպես նաև այլազգի վարձկանների և միջազգային ահաբեկչական խմբավորումների ներգրավման, միջազգային ահաբեկչության ֆինանսավորման, Ադրբեջանի ԶՈՒ զինծառայողների նկատմամբ հայ զինծառայողների կողմից միջազգային մարդասիրական իրավունքի լուրջ խախտումներ համարվող արարքների կատարման դեպքերը:

Դեռևս մինչև 2020 թվականի նոյեմբերի 9-ին եռակողմ հայտարարություն կնքելը և դրանից հետո քրեական գործով վարույթն իրականացնող մարմինն օպերատիվ կարգով արձագանքել և քննության առարկա է դարձրել զինծառայողների և քաղաքացիական անձանց գերեվարումների բոլոր դեպքերը: Ձեռք բերված փաստական տվյալներն անմիջապես աշխատանքային կարգով փոխանցվել են Մարդու իրավունքների եվրոպական դատարանում ՀՀ կառավարության ներկայացուցչի գրասենյակին, ինչպես նաև անհատ իրավապաշտպանների:

Մինչև օրս Ադրբեջանի Հանրապետության կողմից Հայաստանի Հանրապետություն են հանձնվել գերեվարված ընդհանուր թվով 114 զինծառայողներ և քաղաքացիական անձինք: Ներկայումս Ադրբեջանի ռազմաքաղաքական ղեկավարությունը հաստատում է իր մոտ պահվող ընդհանուր 45 ռազմագերիների և պատանդառված քաղաքացիական անձանց փաստը: Բացի

այդ, վարույթն իրականացնող մարմինը քննությամբ ձեռք է բերել փաստական տվյալներ, որ Ադրբեջանում գերության մեջ պահվում են նշվածից բացի այլ զինծառայողներ և քաղաքացիական անձինք, որի ուղղությամբ ձեռնարկվում են անհրաժեշտ միջոցառումներ: Վերոգրյալից հետևում է, որ Ադրբեջանում պահվող ռազմագերիների և պատանդառված քաղաքացիական անձանց թվաքանակի վերաբերյալ Ադրբեջանի ռազմաքաղաքական ղեկավարության կողմից ներկայացվող տեղեկատվությունը վարույթն իրականացնող մարմնի կողմից որպես հաստատված փաստ չի ընդունվում և այդ ուղղությամբ աշխատանքները շարունակվում են:

2020թ. հոկտեմբերի 18-ից սկսած ՀՀ կառավարության կողմից ուղղակիորեն, ինչպես նաև անհատ փաստաբանների միջոցով, ՄԻԵԴ է ներկայացվել Դատարանի կանոնների Կանոն 39-ի ներքո անհատական միջանկյալ միջոցի կիրառման դիմումներ՝ ռազմագերիների և պահվող քաղաքացիական անձանց իրավունքների պաշտպանության նպատակով: ՄԻԵԴ-ը բավարարել է ՀՀ կառավարության կողմից ներկայացված բոլոր դիմումները առանց բացառության և պահանջել Ադրբեջանից տրամադրել տեղեկատվություն իր մոտ պահվող հայ ռազմագերիների և պահվող քաղաքացիական անձանց գտնվելու վայրի և որպիսության վերաբերյալ՝ միաժամանակ պարտավորեցնելով երաշխավորել վերջիններիս իրավունքները: Սակայն, անհրաժեշտ է նշել, որ Ադրբեջանը ոչ միշտ է կատարել ՄԻԵԴ որոշումների պահանջները, ինչի մասին էլ ՄԻԵԴ-ը 2021թ. մարտի 9-ին ծանուցել է ԵԽ Նախարարների կոմիտեին՝ ՀՀ կողմից ներկայացված բազմաթիվ պահանջներից հետո:

Հարկ է ընդգծել, որ ՄԻԵԴ-ում ՀՀ ներկայացուցիչը քանիցս միջնորդել է ՄԻԵԴ-ին որպես միջանկյալ միջոց պարտադրել ադրբեջանական կառավարությանը անհապաղ ազատ արձակել հայ ռազմագերիներին և պահվող քաղաքացիական անձանց, սակայն ՄԻԵԴ-ը հրաժարվել է կիրառել նման միջոց՝ պատճառաբանելով, որ այդ պահանջը գլխավորապես միջազգային մարդասիրական իրավունքի խնդիր է և դուրս է Դատարանի կանոնների Կանոն 39-ի շրջանակից:

ՄԻԵԴ-ում շարունակվող միջպետական իրավական գործընթացից զատ՝ 2021թ. սեպտեմբերի 16-ին Հայաստանի Հանրապետությունը գանգատ է ներկայացրել ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարան ընդդեմ Ադրբեջանի՝ Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման միջազգային կոնվենցիայի խախտման հիմքով: Միաժամանակ, Հայաստանը խնդրել է դատարանին կիրառել մի շարք հրատապ միջոցներ, ի թիվս այլնի, պահանջելով նաև հայ ռազմագերիների ու պահվող քաղաքացիական անձանց անհապաղ ազատ արձակումը: ՀՀ կողմից ներկայացված հրատապ միջոցներ կիրառելու միջնորդությունը ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանի կողմից բանավոր քննվել է 2021թ. հոկտեմբերի 14-15-ի դատական լսումների ժամանակ. առաջիկայում դատարանը կկայացնի իր որոշումը:

ՄԱԿ Խոշտանգումների (CAT) և ԵԽ Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական (ԽԿԿ, CPT) կոմիտեների տարվող աշխատանքների

համատեքստում հարկ է նշել, որ արդարադատության նախարարության կողմից համապատասխան միջոցառումներ էին ձեռնարկվել դեռևս մինչև Ծրագրերի հաստատումը, ինչպես օրինակ՝ ՀՀ արդարադատության նախարարության կողմից 2020թ. նոյեմբերի 30-ին գրություն է ուղարկվել Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեի (ԽԿԿ, CPT) նախագահին՝ առաջարկելով Ադրբեջան պլանավորված, սակայն համավարակի պատճառով հետաձգված այցը կատարել հնարավորինս հրատապ և այցելել նաև Գյանջայի քրեակատարողական հիմնարկ:

Բուն Ծրագրերի կատարման փուլում արդեն Կոմիտեի 2019 թվականի դեկտեմբերի 2-ից 12-ը Հայաստան կատարած այցի վերաբերյալ զեկույցի՝ արդարադատության նախարարության կողմից մշակված և աշխատանքային կարգով ԽԿԿ քարտուղարությանը ներկայացված պատասխան զեկույցը Կոմիտեին է ներկայացվել սույն թվականի ապրիլի 20-ին: Այս առիթն օգտագործելով, Կոմիտեին ներկայացվող զեկույցի պատասխաններում անդրադարձ է կատարվել նաև Ադրբեջանի կողմից «Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման մասին» եվրոպական կոնվենցիայի, ինչպես նաև մարդասիրական իրավունքի մի շարք խախտումներին՝ ներկայացնելով փաստարկված տեղեկատվություն Ադրբեջանի կողմից միջազգային իրավունքի նորմերի խախտումների վերաբերյալ:

Զեկույցին կից ներկայացվել է տեղեկանք՝ ագրեսիայի ակտի ընթացքում Ադրբեջանի զինված ուժերի զինծառայողների կողմից գերեվարված և հայրենադարձված ռազմագերիների և քաղաքացիական անձանց նկատմամբ իրականացված միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի լուրջ խախտումներ համարվող արարքների կատարման դեպքերի վերաբերյալ, ինչպես նաև էլեկտրոնային կրիչով ներկայացվել են նշված փաստերը հավաստող տեսալսողական պատկերներ:

Տեղեկացնում ենք, որ նոյեմբերի 26-ին Շիրակի մարզից զինված անձինք չեն գերեվարվել: Հավանաբար հարցը վերաբերում է 2020 թվականի դեկտեմբերի 13-ին Հադրութի շրջանի Խծաբերդ գյուղի տարածքում մարտական հերթապահություն իրականացրած 62 զինծառայողների գերեվարմանը, որոնց շարքից արդեն իսկ կան գերությունից հայրենադարձվածներ: Ինչպես արդեն նշվել է, բոլոր ռազմագերիների և պահվող անձանց վերադարձի ուղղությամբ աշխատանքները կրում են շարունակական բնույթ:

ՀՀ ԱԳՆ կողմից գերիների վերադարձն ապահովելու նպատակով նախաձեռնվել և իրականացվել են բազմաթիվ քայլեր, այդ թվում օգտագործվել են միջազգային արտադատական մեխանիզմները: Հաշվի առնելով հարցի գաղտնիության մակարդակը՝ հնարավոր մանրամասների ընդգրկումը սույն նամակում հնարավոր չէ:

Ինչ վերաբերում է, ինչպես Դուք եք նշել՝ Զանգելանի ու Ջեբրաիլի շրջան-ների խնդրին, ՀՀ վարչապետը 2020թ. դեկտեմբերի 27-ի իր հարցազրույցում հանգամանորեն ներկայացրել է այն համատեքստը և տվյալ պահին ի հայտ եկած

այն անվտանգային իրողությունները, որոնց առկայության պարագայում նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությունը ստորագրած կողմերի միջև ձեռք է բերվել պայմանավորվածություն (տե՛ս՝ www.primeminister.am/hy/interviews-and-press-conferences/item/2020/12/27/Nikol-Pashinyan-Interview-Petros-Ghazaryan/):

Տեղեկացնում ենք նաև, որ այս պահին Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանարպետության միջև սահմանագծման և սահմանազատման գործընթաց գոյության չունի:

Հարգանքով՝

X

ԲՈՐԻՍ ՍԱՀԱԿՅԱՆ

Կատարող՝ Շիրազ Հովակիմյան
Լրատվության և հանրային դիվանագիտության բաժին
հեռ. 060620234